



ԿՈՌՆԱՐՈՑ ԿԱՏԱՐԻՆԷ ՔԱԳՈՒՅԻ

Կ. ԿՈՌՆԱՐՈՅ ԹԱԳՈՒՀԻՆ

(Շար. տես հատ. ԵՁ յէջ 528, 1898)

ՍԱՐԻՆԵԱՅ աղետոյց սեւ մատեանն կը բացուի՝ ապատամբութեամբ Պամագոս, տայի և յեղակարծ մահուամբ սիրելի որդւոյն, որոնք մահացու հարուածներ եղան իրեն սրտին, Հեռու հայրենիքէն և ծնողքէն՝ որոց զգուանաց կը կարօտեր միշտ, զուրկ սիրելիներէն և ծանօթներէն, կենաց և թագին դաւաճաններով միայն շրջապատուած, զի նոյն իսկ պալատին մէջ կը գտնուէր բոյնն ամենայն դաւադրութեանց՝ որք անդազար իրարու կը յաջորդէին, կարող էր նա երջանիկ ըլլալ և չընկճիլ վշտաց բեռին տակ: Մեծ բարեբախտութիւնն եղաւ՝ որ կրցաւ գէթ կենալն աղատել արևմտաբնութեանց ձեռքէն, որոնք կատաղութեամբ խեղագարուած՝ ոտնակոխ կ'ընէին ամենայն իրաւունք և զթութեան զգացումն: Այլ թշնամեաց թուոյն մէջ կը գտնուէր նաեւ Նիկոսիոյ արքեպիսկոպոսն. որ՝ ինչպէս կը գրէ Սորանցոյ, « առանց յարգանաց և պատկանանաց՝ ուզած ժամանակ թագուհւոյն սենեակը կը մտնէր՝ »: Վենետիկ այնուհետեւ չէր կարող այլ եւս անտարբեր աչօք դիտող ըլլալ այն անպատեհութեանց. անհրաժեշտ հարկ կը տեսնէր միջամտելու ի նպաստ թագուհւոյն, բայց առանց ձեռքէ թողլու խոհեմութիւնը, և հետեւաբար զաղտնի՝ չի զբոցելու համար իրեն թշնամիները, որոց

թիւն կ'աճէր տարուէ տարի: Այսպիսի պարագայից մէջ Հասարակապետութիւնն խիղճ չըրաւ, — և երբ արդեօք խիղճ բրեր է քաղաքագիտութիւնն, — նոյն իսկ դրամի ուժով տիրել կ'իպրոսի զխաւար բերդերուն և շահիլ ազդեցիկ քաղաքացեաց սրահեր:

Յամին 1473, մինչ թշնամիք՝ Եգիպտոսի սուլտանին օգնութեամբ՝ ահաւոր դաւադրութիւն մի պատրաստեր էին, որով դարձեալ յեղափոխութեան հրդեհով վեր ի վայր պիտի ընէին զԿիպրոս, և կատարինէ՛ իմանալով զայն և անյոյս օ և է օգնութենէ՛ փախչիլ միայն կը մտածէր, և ահա անկարծելի կերպով կը հասնէր ի Կիպրոս՝ վենետոյ ընդհանուր ծովակալն Սորանցոյ՝ տասը ցուկանաւերով և բազմաթիւ զօրքով: Անկարելի է նկարագրել թագուհւոյն ուրախութիւնն, որ անմիջապէս լուր զրկեց ի Նիկոսիոյ՝ որ ամբողջ քաղաք լուսաւորն և եկեղեցեաց զանգակները հնչեցնեն ի նշան ուրախութեան: Դաւադիրք տաքնապած՝ փութացին հաշտութեան պատգամաւոր ուղարկել Նիկոսիոյ արքեպիսկոպոսը առ Սորանցոյ, որուն դրած պայմաններուն յանձնառու ըլլալով՝ ոմանք միայն ազատեցան մահուան պատժէն: Թագուհւոյն կենաց ապահովութեան և կղզւոյն խաղաղութեան համար՝ Հասարակապետութիւնն այնուհետեւ միշտ բազմաթիւ զօրաց

1. « L'arcivescovo senza niun rispetto nè reverentia a sua volontà intrava in camera di Caterina ». A. Centelli, *Caterina Cornaro*, etc. 80 էջ:

2. Florio Bistron, *Chronique de l'île de Chypre*, Paris, 1884, յէջ 441-3:

խումբ մի կը պահէր հոն, — որուն առաջին հրամանատարն եղաւ Անդրէոլի, — որպէս զի իսկայն շիջուցանէր ո՛ր և է պատամբու- թեան կայծ՝ որ արծարծէր, վասնզի կա- տարինեայ գահն հրաբխի վրայ հաստատուած էր՝: Մերթ ընդ մերթ վերջին թագաւորին (Յակոբ Բի) մերձաւոր ազգականը կը խորտկին դարձեալ, ինչպէս զահագուրի կարրոտտա լուսինեան, որոյ զահագորութիւնն աւելի եւս զրզուներ էր՝ յետ մահուան եղբօրն: Այն- նայն կարելի հնարք ի գործ դրաւ՝ իւր նպա- տակին հասնելու համար. դիմեց ի Գահիրէ՝ իւր կողմը ձգելու զսուլտանը, բայց ի գո՛ւր. վեր ի վայր ըրաւ Նէապոլսոյ և Եւրոպիոյ ուրիշ արքունիքները, նորէն ձեռք բերելու կորուսած թագը, սակայն ամենայն ինչ ընդ- ունայն եղաւ: Վերջապէս յուսկոտուր՝ ա- պաստանեցաւ ի Հոռլմ, ուր եւս հանդարտ չի մնաց. թագաւորելու տենդէն բռնուած և անյաջողութեանց մտածութեամբ տանջուած՝ հայեց մաշեց կեանքը, մինչև որ մահն վերջ դրաւ անոր ալետանջ օրերուն՝ յամին 1487: Շատ շքեղ և արքայալայել եղաւ յուզար- կաւորութեան հանդէս. թաղուեցաւ ի Հոռլմ Ս. Պետրոսի ստորերկրեայ դամբանաց մէջ: Սակաւ ժամանակի մէջ կարգաւ անհետա- ցան տեսարանի վրայն այն ամէնքն, որոնք այս կամ այն կերպով վտանգ մ'էին կա- տարինեայ կենաց կամ թագին. որով սկսաւ նա սակաւիկ մի ոգի առնուլ, որ կիպրոս հասնելու օրէն սկսեալ՝ անընդհատ փոթոր- կալից զէպրեբու մէջ անցուցեր էր օրերը: Մինչև այն ժամանակ թագին փուշերը միայն զգացեր էր, կը յուսար այնուհետեւ ծաղիկ- ներն այլ վայելել: Սակայն չէր գիտեր հէք թագուհին, թէ ոչ այնչափ թշնամիներէն վտանգ կար իւր իշխանութեան, որչափ իրեն

հայրենիքէն, որուն զիրկը դիմեց միամտա- բար՝ իբրու ապահով ապաստանարան մի, որ ի սկզբան լռելեայն և յետոյ յայտնապէս՝ թա- գուհւոյն անձին պաշտպանութեան պատրուա- կաւ՝ այնչափ սահմանափակեց անոր իշխանու- թիւնը, որ անուամբ միայն կը թագաւորէր: Յամին 1474 մարտի 28ին Վենետիոյ ծերակոյտն որոշեց, թէ այնուհետեւ յաջորդա- բար իրեն նշանաւոր քաղաքացիներէն՝ երկու խորհրդականք և ընդհանաք խմամակալ մի պիտի զրկուին ի կիպրոս՝, թագուհւոյն օգնելու համար ո՛ր և է գիտարին գործաւ նութեանց մէջ. մինչ իրօք անոնց նպատակն էր՝ ձեռք առնուլ տէրութեան սանձը, բա- րեկամական անչլութիւններ հաստատել մեր- ձակայ պետութեանց հետ, հսկել հասարա- կաց ելեմտից վրայ, և վերջապէս օր մի սիրապետել բոլոր կղզւոյն: Գաղղիացի հեղինակ մի կ'ըսէ, թէ « Նոյն գարու դի- ւանագիտական գրութեանց մէջ՝ անկարելի է գտնել քան զայս աւելի գերազանց հեռա- տեսութիւն մի՝ որ միացած ըլլայ աւելի խո- հեմ՝ վերապահութեան մի հետ. և թերեւս ժողովրդեան մի կառավարութեան համար՝ երբէք այսպիսի իմաստուն սկզբունքներ ա- լելի չափաւոր և միանգամայն աւելի կորովի լեզուով բացատրուած չեն<sup>3</sup>»: Թագուհին չգիտէր իբրաւի՝ թէ ինչ էր բուն նպատակն այս պաշտօնեաները հաստատելուն, զորոնք Վենետիկ իբրու իրեն օգնականս կը զրկէր. վասնզի ի սկզբան շատ զոհ կ'իբրեւէր անոնց- մէ: Երբակոյտն՝ թագուհւոյն իշխանութեան այս նուազումը մեղմելու համար, կիպրոս զրկեց կատարինեայ հայրը՝ զՄարկոս կոռ- նարոյ՝ որ երթայ միխիմարէ գուստրը, վա- դամեռիկ որդւոյն մահուան առթիւ, և օգնէ անոր կառավարութեան<sup>4</sup>:

1. Յամին 1474 փետրուարի 9ին, որոշեց Վենետիոյ տէրութիւնն շօրք ուղարկել ի կի- պրոս, « pro tutela, salute et incolunitate in- sulae Cipri ». A. Centelli, էջ 85:  
2. Առաջին անգամ խորհրդական ընտրուե- ցան ի ծերակուսէն՝ Մինիոյ Փրանկիսկոս և Լուզուրիկ Գաբրիէլ, իսկ ընդհանուր խնամա- կալ՝ Յովհանն. Սորանցոյ:

3. Mas Latrie, Histoire de l'île de Chypre, և այլն, III.  
4. « Dilecte civis noster Marce Cornarie, miles, ut, pro hortamento et consolatione se- renissime regine Cypri, filie tue, in presenti sua afflictione ex obitu reguli filii sui, in Cy- prum accedas ». A. Centelli, էջ 83:

ինչպիսիք անուշ յոյսերով որորուեցաւ կա-  
տարինէ վայրկեան մի, երբ տեսա իրեն  
մօտ երկու հայրենակալք խորհրդակաւանները  
և մասնաւոր սիրելի հայրը, որց ներկայու-  
թիւնն յաջող և բարեբաստիկ օրեր էր իրոս-  
տանար իրեն: Ետա չանցա՛ւ բոլոր յոյսերն  
ի դերու ելան. վասնզի քանի մի ամիս վերջը՝  
լուռ, յամառ և անդուլ կոխ մի սկսեք էր  
երկու հակառակ ուղղութեամբ գործող կող-  
մանց մէջ. մէկ կողմէն՝ կատարինէ, իրեն  
հայրն և կիպրոսի գրեթէ բոլոր ազնուակա-  
նութիւնն. միւս կողմէն՝ խորհրդակաւանք,  
ինամակալն և վենետիկոյ խորշխանութեան  
կուսակիցք. կոխ մ'էր այն բողոքներու, ա-  
նիբաւ պահանջներու և հայաժանաց: Սոյն  
բանիս նկատմամբ կը գտնենք, նոյն դարու  
յիշատակարանաց մէջ, դրսերու թուղթեր  
առ կատարինէ, ծերակուտին յայտնի և քոչ-  
արկեայ հրահանգներ առ խորհրդակաւան,  
կատարինեայ և իրեն հօր թախանձներ և  
բողոքներ առ դուքսն և առ ծերակոյսն: Սոյն  
թղթերէն կ'իմանանք՝ թէ խորհրդակաւանք ի-  
րենց չափին և սահմանէն դուրս ելած, ախ-  
րաբար և իշխանօրէն կը վարուէին թագուհ-  
ւոյն հետ, ամէն բանի արգելք և դժուարու-  
թիւն հանելով և մինչեւ անգամ թոյլ չի  
տալով անոր՝ որ քաղաքէն դուրս ելնէ. կը  
բանային և կը կարգային թագուհւոյն եկած  
նամակները, ծախուց դրամն իսկ չափով և  
նշդելով կու տային. միով բանիւ, անգթօրէն  
կապկպեցին անոր բոլոր անձնական ապա-  
տութիւնները: Այս ամէն բան տեսնելով  
հայրն՝ կրնար դիմանայ և չբողոքել առ ծե-  
րակոյսն վենետիկոյ՝ եղած բռնութեանց դէմ.  
այրած որտով կրկին և կրկին գրեց առ դուքսն,  
յուսալով թէ վարման պիտի տարուէր ե-  
ղածներուն. սակայն ի զօր. զի խորհրդա-  
կանք կը կանխէին քան զինքն յառաջ գրել,  
թէ Մարկոս յապտտամբութիւն կը գրգռէ  
գլխագուհին՝ ընդզէմ՝ իշխանութեան վենետի-  
կոյ, այնպէս որ կիպրոսից անգամ կ'ատէին  
զինքը՝ իրեն գողողութեան համար, և այլն:  
Եւ այս բանիս իբր ապացոյց՝ մէջ կը բերէ  
կուերինի հետեւեալ ղէպը. իբր թէ թա-  
գուհւոյն մատակարարն թունաւորել տուեր  
էր հաւ մի, որպէս զի Մարկոս ուսելով զայն՝

թունաւորուի և մեռնի. և այս բանն բարե-  
բաստարար կը յայտնուի սենեսկալին ձեռ-  
քով՝: Վենետիկոյ քաղաքագէտ կառավարու-  
թեան նպատակն էր ձանձրացնել զկատա-  
րինէ, որ վերջապէս յօժարութեամբ իրենց  
յանձնէ կիպրոսի վարչութիւնը. և իրենց  
անհրաժեշտ կը համարէին զայդ, բայց չէին  
ուզեր թշնամեաց ոգիները գրորել, այն պատ-  
ճառաւ եւս կ'ուզէին ծածուկ հնարիւք հաս-  
նիլ իրենց նպատակին: Յամին 1478 որո-  
ւնց ծերակոյսն, որ վենետիկցի հարիւր  
ազնուական ընտանիք երթան կիպրոսի մէջ  
բնակին, և անոնց ընդարձակ կալուածներ  
չնորհէց. միւս կողմէն՝ սրտնք որ կ'ընդդի-  
մանային իրենց գերշխանութեան, կը հե-  
ռացնէին զանոնք կղզիէն, որով երթալով  
բոլոր կիպրոս վենետիկցի գաղթականներով  
կը լեցուէր: Ընդհակառակն, որքան կը  
նուազէր թագուհւոյն իշխանութիւնն, նոյն-  
քան եւս կ'աճէր ժողովրդեան սէրն առ նա.  
և զայս կը տեսնենք իրեն մէկ ուղեւորու-  
թեան առթիւ՝ զոր ըրաւ Պամագոստոսայէ ի  
Նիկոսիա, յորում մեծահանգէս չքով և պա-  
տիւններով ընդունուեցաւ ժողովրդէն: Տէրու-  
թեան վեց մեծամեծ ասպետք կ'ընկերէին  
թագուհւոյն, առջեւէն կ'երթային երեք գունդ  
զինուորք, յետոյ հետիոտն պալատականք և  
այլ զինակիրք, բազմաթիւ տիկնայք և նա-  
միշտք, երկու հարիւր ձիաւորք, թագուհւոյն  
հայրն Մարկոս և վենետիկոյ խորհրդակաւանն  
կուերինի, որ կը նկարագրէ սոյն հանգէսը՝  
առ ծերակոյսն և զուքսն գրած մէկ թղթին  
մէջ. Ժողովուրդն խոնքեր էր բոլոր հրապա-  
րակաց և փողոցներուն մէջ, սրտնք՝ թա-  
գուհւոյն անցնելու պահուն՝ միաբերան կը  
գոչէին սրտապին. «կեցցէ՛ թագուհին մեր  
կատարինէ», և ուրախութեան արեքցած  
ամբոխն՝ չէր գիտեր ինչպէս բացատրել իրեն  
սէրը և յարգանքները: Նիկոսիոյ մէջ ուրիշ  
հանդէսներ կը սպասէին, ուր բոլոր եկեղե-  
ցականաց դասն և ժողովուրդն ընդ առաջ  
եկաւ զինքն ընդունելու, ուրախութեան և յաղ-  
թանակի կեցցէներով և համակ ոսկի հովա-

1. A. Centelli, և այլն. էջ 91:

նոցով մի Վերջապէս հազիւ կը սկսէր նա վայելել իրեն իշխանութեան փառքը, որ ափսոս երկար պիտի չտուէր: Կարծես նոյն ժամանակները խորհրդականաց հայածանքն այլ սակաւիկ մի դարար առաւ. և յիրաւի յամին 1479 գրուած մէժոս մի կը գաննէք, որ կը պատուիրէ խորհրդականաց՝ որ ամենայն կերպով ջանան գոհացնել զԹագուհին, և թոյլ տան՝ որ իւր ազատութեամբն երթայ ուր որ կ'ուզէ. և հոգ տանին միանգամայն, որ առատօրէն մատակարարուին անոր ապրուստն և կարեւոր բաներն, և այլն:

Նոյն իսկ Եղիպտոսի սուլտանն, որ երբեմն հիւրընկալեր և նպաստեր էր Կատարինեայ հակաաւերդաց, վերջապէս համազուեցաւ թէ իրաւունքն թագուհւոյն կողմն էր և թէ հարկ էր զինքը պաշտպանել. ուստի շքեղ ընդունելութեամբ մեծարեց անոր զեպանը, որ գնացեր էր երկու տարուան հարկը հատուցանելու, և իրենց 881 թուականին (1476) և Մալքագան ամսոյն 10ին, առ Կատարինէ գրած մէկ նամակին մէջ կը յայտարարէ, թէ այնուհետեւ զինքը միայն կը ճանչնայ օրինաւոր թագուհի կիպրոսի. և ի նշան անկեղծ բարեկամութեան, պարգեւ կը զրկէր «Ոսկեհնու զգեստ մի՝ սպիտակ արեւսնի սատառով, 14 կտոր յախճապակի, 4 լիտր հալուէի փայտ, 15 լիտր կնդրուկ, սափոր մը բալասան, 10 տուփ թերիակէ», և ուրիշ այլեւայլ անգին ընծաներ:

Մակայն Նեապոլսոյ արքունիքն բոլորովին հանգարտած չէր, և ձեռքի տակէն միշտ նորանոր փորձեր կ'ընէր, կիպրոսի գահը վենետիկցոց ձեռքէն խլելու համար: Նոյն ժամանակները Նիկոսիոյ մէջ լուր տարածուեցաւ, — ինչպէս կը գրէ Մորանցոյ, — իբր թէ Յակոբ Բի երէց անհարազատ որդին, — նախ քան անցնելն ի վենետիկ, — Կատարինեայ մէկ քրոջ հետ պիտի ամուսնա-

նար՝ Լուսինեանց յաջորդութիւնը շարունակելու համար: Նեապոլսոյ արքունեաց սոյն զաւարդութեան մէջ էր նաեւ Եղիպտոսի սուլտանն, որով կ'ուզէին կիպրոսը ազատել վենետիկոյ տիրապետութենէն. և քանի մի պատմիչք կ'ըսեն, թէ Կատարինէ եւս տեղեակ էր այդ զաւարդութեան, և նոյն իսկ անոր զխաւոր արծարծողն էր, որպէս զի ազատել վենետիկոյ չափազանց պաշտպանութենէն և Կատարինայ ազատաբար գործածել իւր իշխանութիւնը: Կատարինեայ գահասիրութիւնը կը զրգուէին նոյնպէս իրեն պալատական իշխանք և տիկնայք, որոնք կը վախէին կորսնցնել իրենց ճոխ հասոյթները, երբոր վենետիկցիք բոլորովին տիրանային կղզւոյն, և ասոնց մէջ զխաւորք էին՝ Տրիստան Ժիրէ<sup>1</sup> և իւր քոյրն՝ Յամին 1479 Կատարինեայ կենաց ուրիշ գաւարդութիւն մ'այլ տեղի ունեցաւ, վենետիկ զօրակաւոր մի ձեռքով՝ որ Չերիսայի զղկիկն հրամանատարն էր: Սա, իբր թէ իրեն մատուցած ծառայութեանց արժանաւոր վարձատրութիւն գտած չըլլալով, ուզեց ի թագուհւոյն տնուլ իւր վրէժն, և վենետիկ թշնամեաց հետ միացաւ ժամանակին յայտնուելով զաւարդութիւնն, վենետիկ զխաւորեցաւ իրեն զաւակիցներով հանգերձ:

Պահ մի Կատարինեայ աստղն սկսաւ դարձնալ փայլիլ. ամէն կողմէ կը շնչէր յաջողութեան հողմն, ամէն տեղ՝ ուր որ երթար ժողովրդեան խանդավառ ցոյցներ կ'ընդունէր, Եղիպտոսի սուլտանին պաշտպանութիւնը կը վայելէր, որ յամին 1483՝ կիպրոսի Փիլիպարդ ցեպանին ձեռքով գործէալ ճոխ և շքեղ ընծաներ զրկեց թագուհւոյն, և նոյն իսկ վենետիկոյ խորհրդականք՝ Բենտարգոս Տիպոլոյ և Քրիստոփոր վենետիկ՝ ամենայն յարգանք և հպատակութիւն ցոյց կու տային անոր. որով եթէ 'չ երջանիկ՝ զեթ հանգարտ կ'ապրէր: Մակայն վենետիկոյ խորագէտ

1. Սա, երբ ձերբակալուեցաւ վենետիկոյ նաւատորմիչ հրամանատարէն և վենետիկ կը շարունակէր Քիցցոյ Մարինէ հետ, ճանապարհին մէջ անձնասպան եղաւ: Florio Bustron (Chronique, էջ 454) հետեւեալ կերպով կը պատմէ

Տրիստանի անձնասպանութիւնը. « Con un diamante che teneva un anello pestato e mangiato con pane, hebbe la morte da sua posta, perchè sapeva lui medesimo, che andando a Venetia, andava per morire con più vergogna».

կառավարութիւնն՝ ուրիշ դիտումներ ունէր իրեն խիստ վարուժը փոխելուն մէջ. վասնզի ինքն արդէն որոշակի վճռած էր տիրանալ Կիպրոսի, բայց կ'ուզէր գեղերեսել գործը՝ որ բռնութեան կամ յափշտակութեան կասկած չի տայր ոչ մէկուն, այլ իբր թէ թագուհին իւր կողմէն յօժարակամ կը նուիրէր կղզին առ Հասարակագետութիւնն : Բայց երբ այս նպատակին հասնելու համար անօգուտ եղան ամենայն հնարք և հրահանգք, որոշեց թագուհւոյն Գէորգ եղբայրը Նիկոսիա դրկել, որ երթայ համոզել զկատարինէ՝ որ հրաժարի իւր թագին :

Ինչ անգուժ նուիրակութիւն էր այն, երթալ քրոջ զխէն վերցնել արքունի թագը, որ իրենց ընտանեաց մեծազոյն պարծանքն եղաւ : Կարելի է հաւատալ թէ նա առանց գովամակութեան յանձն առած ըլլայ այսպիսի առաջարկութիւն մի. և սակայն ձերակատին սպանաւեաց և ստիպիչ հրամանին առջև տեղի տուաւ, ինչպէս կ'իմանամք իրեն խօսքերէն առ կատարինէ : Սոյն նուիրակութիւնը Փետրագոյն յանձնեց ինքն որ առաջ՝ Տասնեց ասեանն հրաման զրկել էր ընդհանուր ծովակալին Գիեզոյի (1488, Հոկտ. 22—23), որ Միջերկրականի ջուրերուն մէջ գանուած նաւատորմիցն առած իսկոյն Կիպրոս երթայ, և ամենայն գոգուցութեամբ բռնելով զթագուհին՝ վճենտիկ դրկէ : Այս փոթորկաց որոսմունքն արդէն շատ յառաջ հասեր էին ի Կիպրոս, և թագուհւոյն մտերիմք կը յորգորէին զինքը փախչիլ ի Հնդկոս կղզին. բայց նա չուզեց սկանչի կանխ այդպիսի թելադրութեանց, թէ և ունէր կարելուր միջոցներ և ժամանակ. որովհետև վճենտիկոյ և Կիպրոսի մէջ եղած հեռաւորութիւնն 13000 ծովային մղոն է, զոր կտրելու համար այն դարերուն՝ երկու ամսէն աւելի ժամանակ պէտք էին գնել :

Գէորգ ի սկզբան շատ արգելներու հանդիպեցաւ. « վասնզի երբ կատարինէ իմացաւ անոր գալստեան պատճառը, կ'ըսէ Կիպրացի ժամանակագիրն<sup>1</sup>, շատ այլայլեցաւ, և չէր ուզեր ամենեկին հրաժարիլ իւր գահէն և թո-

ղոյ այն գեղեցիկ և հարուստ թագաւորութիւնը, յորում վարժած էր արքայական շքեղութեամբ ասրիլ, և երթալ ի վճենտիկ, ուր զիտէր թէ ինչպէս խնայողութեամբ և անշուք կերպով պիտի ասրէր » : Յետոյ եղբոր դանաւորով բռաւ. « Գոչ չե՛ս ըլլար վճենտիկցի տեարք՝ մենեկէս վերջը տիրանալու այս կղզոյն, և այսպէս շուտով կ'ուզեն զրկել զիս ամուսնոյս ձգած ժառանգութիւնէն » : Այն ժամանակ եղբայրն, զոր « այբ մեծահանճար և պերճասո » կը կոչէ վերոյիշեալ ժամանակագիրն, գեղեցիկ ճառ մի կը խօսի քոյրը համոզելու համար՝ որ . թողու Կիպրոսն և երթալ. իմաստալից ճառ մ'է, յորում մէջ կը բերուի Հայրենեաց առ նա ըրած բոլոր շնորհները. « Անոր ձեռքով բարձրացար, կ'ըսէ, այս բարձր աստիճանին, ինքն էր որ վտանգներու մէջ պաշտպանեց զքեզ, և հանդարտութեան ժամանակաց մէջ թողուց՝ որ խաղաղութեամբ վայելես թագաւորութիւնդ. և հիմակ որ կը տեսնէ՝ թէ թշնամիք պաշարեր են զքեզ, ներքին և արտաքին վտանգներ կը սպառնան կենացդ և գահուդ, և չունիս ժառանգ՝ որուն յանձնես թագաւորութիւնդ, կ'ուզէ նա այսու այդ ամէն բանին պարման ընել, որուն համար շնորհակալութիւն միայն կը պարտիս առ ձերաւորսն » : Մէջ կը բերէ յոյնպէս ծնողաց փափաքը, իրեն և ընտանեաց նիւթական շահերը, և մինչև իսկ Աստուծոյ կամքը<sup>2</sup> : Կատարինէ՝ լսելով այն խօսքերը՝ հազիւ բռնեց արտատուրը, և ստիպեցաւ վերջապէս տեղի տալ եղբոր առաջարկութեան, և հրաժարիլ այն թագաւորութեանէն՝ որ երբէք կատարեալ երջանկութիւն չէր տուած իրեն : Հասարակագետութիւնն հազիւ առած այս ուրախարար լուրը, իսկոյն յատուկ նուիրակ մ'ուզարկեց ի Գահիրէ՝ պաշտօնապէս ծանուցանելու համար սուլթանին, թէ Ս. Մարկոսի առիւծն փոխանակեց Լուսինեանց զրօշին՝ Կիպրոսի զղեկաց և քաղաքաց մէջ. և այդ պէտք չէ բնաւ խանդարէ Յիպոտոսի և վճենտիկոյ տերութեանց մէջ եղած բարեկամա-

1. Fl. Bustron, Chronique, յէջ 434-5 :

2. Անդ. էջ 436-7. - A. Centelli, էջ 104 :

կան անհուփենները. վասնզի այդ փոխա-  
նակութիւնն եղաւ, կը յաւելուն, « խնդի ե  
ազատ որոշողութեամբ մեր վեհափառ ե ա-  
մենասիրելի դատեր կատարինեայ կոնարոյի,  
որ էր զուար վենետիկցի ազնուական Մար-  
կոսի կոնարոյի »:

Խորագետ Հասարակապետութիւնն դիտ-  
ցաւ մեզմեզ գահազուրկ զշոյոյին ցտեբը՝ շքեղ  
հանկաներով, որոց ծրագիրը յառաջագոյն  
յօրիններ էր ձերակոյտն: Կատարին է Նիկո-  
սիայէ պիտի երթար ի Ֆրանսիոստա ե ան-  
տի ուղղակի ի Վենետիկ, ըստ կարելոյն  
փառաւոր շքեղութեամբ, որոց համար երկու  
հազար դուկատ ոսկի սահմանուեր էր: Լի-  
դոյի Ս Նիկոյայոսի վանքին մէջ իրեն ար-  
ժանաբար սենեակներ պիտի պատրաստէին  
առժամանակեայ, ուր պիտի ընէր իւր առաջին  
դաշարը: Հոն պիտի երթար Եղեմացիկի (E-  
scintoro) կոչուած դրսական նաւն՝ հանդերձ  
ազնուագամ տիկնամբ, բոլոր ձերակուտին  
անդամներով ե ազնուականներով, որոնք պի-  
տի ընկերէին զշոյոյին՝ մինչեւ ի տաճարն  
Ս. Մարկոսի, որ բարեպաշտ ե յաղթական  
Վենետիկոյ նուիրական տապանն էր:

Երբոր պիտի մեկնէր կատարին է Նիկո-  
սիայէն, կը պատմէ կիպրացի ժամանակա-  
գիր սմն, բոլոր ժողովուրդն խոնքեր կեցեր  
էր երկայնութեամբ հրապարակներուն ե փո-  
ղոցներուն մէջ: Արքունի պալատէն զուրս  
ելելով, ետ դարձաւ նա վերջին անգամ մի  
նայելու այն պատուահաններուն, յորոց երբեմն  
այնչափ անգամներ երեւցեր էր ժողովրդեան՝  
ցնծութեան խանգալատ աղաղակներու մէջ,  
մինչ իր աստիճանին բարձրութեամբ ե զեղցե-  
կութեամբ սիրելի ե պաշտելի էր ամենուն:  
Այն սենեկաց մէջ ունեցեր էր նա՝ իւր  
վառվռուն հասակին երազները, զալար յոյ-  
սերը, իւր մայրական գգուանքը, իւր զուարթ  
ե տխուր, անոյշ ե գառն օրերը, միով բանիւ՝  
կենաց վիպասանութեան կարմիր ե սեւ էջերը:  
Նոյն վայրկեաններու յուզումներն թոյլ չի  
տուրկ կատարինեայ մտքին՝ որ ազատուէն  
թոչաւոր յիշատակաց զերեզմանին մէջ . . .  
աճապին ամբոխն ամեն կողմ կը մղէր, կ'ե-  
րերէր, կը հծծէր ծովու նման, որ անգամ  
մ'այլ կ'ուզէր տեսնել զթագուհին ե ողջունել

զինքը: Երբէք մարդ այնչափ չի սիրուիր՝ որ-  
չափ մեկնելու պահուն. ե կիպրացիք նոյն  
օրը պէտք կը զգային ցուցնելու իրենց բո-  
վանդակ սէրը ե զգացումները, որովհետեւ  
վաղը թերեւս ուրիշ տէրեր պիտի մտնէին  
իրենց տունը: — Ընկերակցութեամբ ընդ-  
հանուր ինամակային ե կիպրոսի բոլոր ազ-  
նուականաց, բազմութեամբ յոյն հեծեալազ-  
րու ե հետեակ զինուորաց ելաւ Նիկոսիայէն  
ե Ֆրանսիոստա քնաց. թագուհին բոլոր սեւ  
հագած էր, ինչպէս նաեւ իրեն ուղեկց  
տիկնայքը:

Հանդիսաւոր հրաժարումն թագաւորութե-  
նէն կատարուեցաւ ի Ֆրանսիոստա, յամին  
1489 փետրուարի 26ին, հինգշաբթի օր մի  
առաւօտեան, մինչ փողոցներուն մէջ կը  
բարձրանար բարեկենդանի բարշտներուն  
զոռում գոչումն: Յետ պատարաց մի մա-  
տուցանելու Հոգւոյն Սրբոյ՝ արքունի մատրոն  
մէջ, ուր ներկայ էին կղզւոյն բոլոր ասպետք  
ե ազնուականք, կը պատմէ Նաւաճերոյ թէ  
եպիսկոպոսն օրհնեց վենետիկեան Ս. Մար-  
կոսի առիճակիր դրօշ մի, զոր Վենետիկոյ  
նաւատորմին ընդհանուր ժողովակախ՝ յանուն  
Հասարակապետութեան ընդունելով թագուհ-  
ւոյն ձեռքէն, ըսաւ. « Այս դրօշն միշտ ե  
ամէն թշնամեաց դժ պիտի պաշտպանէ  
կիպրոսի տէրութիւնը »: Այս ըսելուն պէս՝  
Ֆրանսիոստայի զինաւոր հրապարակին մէջ  
բարձրացուցին այն դրօշը. ե նոյն ժամուն  
բոլոր նաւերէն, զղեակներէն ե բերդերէն վար  
առին Լուսինեաց զինանշանը, յետ 296  
տարիներու իշխանութեան, տեղի տալով Հա-  
սարակապետութեան ոսկեղէն թեւաւոր ա-  
ռիճուն: Այնուհետեւ զրեթէ դեռ ամիս մ'այլ  
մնաց կատարին է, ե հետեւեալ ամսոյն մէջ  
(մարտի 19ին) թողուց բոլորովին կղզին,  
անցնելով երկու կարգ մարդկանց միջէն,  
որք կու լային այնպիսի ողորմածաւր թա-  
գուհի մի կորստընցնելուն համար: Կրօնական  
ժայրէ ի ժայր լի էր բազմութեամբ. ժողո-  
վրդեան հեծեծանքն կը լսուէին մինչեւ  
Դաղմատիկա նաւուն մէջ, ուր մտաւ թա-

1. Fl, Bustron, Chronique, էջ 487:  
A.R.A.R.®

գուհին՝ եղբոր, վեց օրփորգաց և պալատա-  
կան անձանց հետ: Կատարինէ կը մխիթա-  
րէր և կը բաշխէր ժողովորդը՝ ձեռքերը  
շարժելով. իր թէ բւեր Մի յաք, նորէն պի-  
տի դանամ. — մինչդեռ ինքն ալ կարօտ էր  
քաջախիբութեան և մխիթարութեան: Երբոր  
խարխիները վերուցին այն երկու նաւերուն,  
որք զինքը վենետիկ պիտի փոխադրէին,  
թագուհին մարեցա ինկաւ օրտին յուզումէն:  
Հովեւ և փոթորիկներ կարծես հաւան չէին  
կատարինեայ երթին, շատ ընդդիմացան և  
նեղեցին նաւերը, և երկուքուկէս ամիս տեւեց  
ճանապարհորդութիւնն Կիպրոսն ի վենե-  
տիկ, ուր հասաւ միայն թագուհւոյն նաւն  
յունիսի 5ին, և կանգ առաւ Լիդոյի առջեւ,  
մինչդեռ միւս ուղեկից նաւն փշրեցաւ այլե-  
նեքէն, որով շատ մարդկանց կենաց և թան-  
կազին իրաց կորուստ եղաւ: Թագուհւոյն  
նաւուն վարապետը ոսկիթել բանուած էին,  
իսկ նստարանը բոլոր թաւշեայ և մետաք-  
սապատ, որովք կ'ուզէին վենետիկից խառողել  
անոր աչքը և մտնողի ցաւերը: Յետ ամբողջ  
օր մի շանգիտա անծելու Ս. Եկիլոյայոսի  
վանքին մէջ, Բարբառիզոյ դուքսն անոր ընդ  
առաջ գնաց Եզնացիկ նաւով, վենետիկոյ  
բոլոր ազնուական արանց և տիկնայց ընկե-  
րակցութեամբ, ուր գուքսն իւր մտ բազմե-  
ցուց զկատարինէ՝ ոսկեզօծ ամբողջ վրայ,  
ցուցնելու. համար թէ նա իւր նախկին իշ-  
խանութիւնը և պատիւը չէր կորուսած: Եւ  
յիբաւի, շնորհուեցաւ անոր իրաւունք՝ «Թա-  
լուհի Կիպրոսի», Հայոց և Երուսաղեմի»  
կոչուելու, որոյ վրայ յետոյ աւելցաւ նաեւ  
«Բամբելչն Աղղոյի» տիտղոսն:

Անցնի Լիդոյէ մինչև ի Ս. Մարկոս՝ պէտք  
է յիբաւի յաղթանակ մ'եղած ըլլայ: Նախ  
կը յառաջէր Եզնացիկ կոչուած հրաշայի  
նկարապարզ և ոսկեդրուագ զբսական նաւն,  
որու կը հետեւէին բազմաթիւ զրօշակիր նաւք  
և պատրիկներուն հարիւրաւոր զարդարուն  
գոնդոլայք, և ուրիշ հարիւր եւ՝ բոլոր պաշ-  
տանական անձանց նաւակներ, որոց կը յա-  
ջորդէր ուրիշ խումբ մի հազար և մէկ այլ-  
եայլ ձեւերով մակոյցներ, որոց մէջ խոնք  
էին հազարաւոր հետաքրքիրք, որք մերձա-  
կայ քաղաքներէն վագեր էին ի վենետիկ՝

հանդիսին ներկայ ըլլալու համար: Տիկնայք  
գունազոյն թաշկինակներ կը ծածանէին, արք  
մեծագոյն կեցցէներով և ծափաձայներով օդը  
կը թնդացնէին, և ի նմին ժամանակի ծան-  
րածայն կը հնչէին միանգամայն բոլոր եկե-  
ղեցեաց զանգակք, որոց նուիրական գան-  
գիւնն կը խառնուէր հրազինուց, շփորներու,  
զափերու և ուրիշ հարիւրաւոր նուագարան-  
ներու տարօրինակ կերպով զանաւարտ ձայ-  
ներուն հետ: Թիբաւի արքայալայել հանդէս  
մ'լր, մոլեգին խառնածայն բամբիւններու  
ժուր մի, որով կ'ուզէին զբազնցնել թագուհ-  
ւոյն միտքը, որ արդէն յափշտակուած էր ի  
տես սրածայր կոթոններուն և երկնամոխշ  
զանգակատանց, որք վենետիկոյ մարմարեայ  
ամփիթատոնէն վեր կը բարձրանային:

Յամբք եյնելով գուքսն, կատարինէ և  
արգազիր ուղեկցաց երկար խոսմի՛ն, Ս. Մար-  
կոսի հրապարակին միջէն անցնելով՝ բիւ-  
զանգական տաճարին մէջ մտան: Այն տեղ  
կատարինէ յօժարակամ Հասարակապետու-  
թեան նուիրեց Կիպրոսի թագաւորութիւնը,  
որու փոխարէն գուքսն ապագութեան պատիւ  
առաւ անոր Քեղոք եղբոր, որ նոյն գործին  
յաջողութեան համար այնչափ աշխատեւր էր:  
Շատ նշանաւոր նկարիչք, ինչպէս օրինակ  
իմք, Պ. վերոնացին, Երեցն Պալմա կամ  
անոր մէկ աշակերտն՝ Կորոնա և այլք՝ նկա-  
րեցին այս արարողութիւնը, յորում կ'երեւի  
թագուհին՝ իւր ամենէն աւելի ճոխ հանդեր-  
ձից մէջ՝ որ Կիպրոսի թագը կ'ընծայէ Բար-  
բառիզոյ դուքսի: Յետոյ կատարինէ՝ նոյնպէս  
թափօրով ֆերբարայի զբոյն պալատը՝ գնաց,  
ուր մնաց երեք օր. և այն օրերուն մէջ՝ տե-  
րութեան ծախիւք՝ ի պատիւ իրեն տրուեցան  
ներկայացումներ, նուագահանդէսք և խնճոյք:  
Այն երեք օրերէն վերջը առանձնացաւ իրեն  
ընտանեկան տունը՝ ի պալատն Կոնսնք, ծե-  
րակուտին որոշողութեան սպասելով:

Շարայարեւի Ը. ՅԱՎ. ԹՈՐՈՍԵԱՆ

1. Այս պալատը գնեց Հասարակապետու-  
թիւնն յամին 1621 և առաւ զայն թուրքաց,  
որոքք վաճառք կը բերէին ի վենետիկ. և այս  
պատճառաւ մինչև հիմակ կը կոչուէր Fondaco  
dei Turchi,